ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«29» մայիս 2017թ. № 170-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N204-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N224-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 12-րդ ենթակետով՝ հարկային ու մաքսային վարչարարության բարեփոխումներին աջակցելու և հարկային ու մաքսային վարչարարության հարցերով պետության, գործարար համայնքի ու հասարակական հատվածի միջև արդյունավետ երկխոսություն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N204-Ա հրամանով հաստատված հավելվածը լրացնել 33-36-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33. «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

34. «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

35. Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

36. «Հայաստանի ձեռներեցների կոնֆեդերացիա» իրավաբանական անձանց միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ